

5.9 Անվտանգության պահանջները՝ տրված 4-րդ բաժնում, վերահսկվում են սալերի արտադրության նախապատրաստման և կազմակերպման ժամանակ, ինչպես նաև ըստ պետական սանիտարահիգիենիկ հսկողության մարմինների պահանջով:

6. Փորձարկման մեթոդները

6.1 Սալերի շեղումն ուղղանկյուն գուգահեռանիստի տեսքից, ուղիղ երկրաչափական ձևից, կողերի և անկյունների ուղիղ լինելուց, ինչպես նաև սալերի մակերևույթների ծոման չափումը կատարում են մետաղական քանոնով՝ ըստ ԳՕՍ 427, 90°-ի ստուգիչ անկյունաքանոնով՝ ըստ ԳՕՍ 3749, սխալանքները մինչև 1 մմ ճշտությամբ, ձողաճարմիկով՝ ըստ ԳՕՍ 166 ստանդարտների:

6.1.1 Տրված ձևից սալերը շեղումների որոշումը կատարում են դրանց չորս տեղում՝ կողային և ճակատային նիստերի մեջտեղներում: Ողղահայացությունից նիստերի շեղման չափումների համար անկյունաքանոնը հենման մակերևույթով այնպես են դնում ճակատային նիստերի վրա, որպեսզի դրա չափման մակերևույթը շոշափի սալի նիստի որևէ ամենամեծ դիրքը և քանոնով չափում են սալի և չափիչ անկյունաքանոնի մակերևույթների միջև եղած ամենամեծ բացակը:

6.1.2 Սալերի երկարության և լայնության որոշումը կատարում են քանոնով չափելով սալերը երեք տեղում ամեն մի ծայրից և մեջտեղում՝ իրարից 50-ից մինչև 45 հեռավորության վրա:

6.1.3 Սալերի հաստության որոշումը կատարում են վեցը տեղում. սալերի ճակատներում՝ չորս և մեջտեղի մասում՝ երկու, 50-ից մինչև 45 հեռավորության վրա ձողակարկինով:

6.1.4 Սալերի կողերի և անկյունների հեռացումները, փչուկների և խառնուկների չափումները կատարում են մետաղական քանոնով:

6.1.5 Սալերի երեսային մասերի ծովածությունը որոշում են սալերի երկու ամենամեծ նիստերի վրա: Սալը տեղադրում են հարթ հորիզոնական մակերևույթի վրա: Քանոնը կողով դնում են սալի նիստի կենտրոնում՝ հաջորդաբար երկու ուղղություններով, սալի ամբողջ երկարությունով և լայնությունով չափում են գոգավորություն ունեցող մակերևույթի համար ամենամեծ բացակը, անհարթություն ունեցող մակերևույթի համար՝ ըստ եզրերի բացակը: Սալի անհարթությամբ ծոված մեծության չափման արդյուքը վերցնում են ամենամեծ բացակի արժեքը մինչև 1 մմ կլորացումով: Սալերի երեսի մակերևույթների վրա ճաքերի առկայությունը ստուգվում է դիտողաբար: